ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ 12 ՔԱՂԱՔՆԵՐԻՑ 8-Ի ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՎ 84 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻՑ 37-Ի ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ինչ վերաբերում է ինքնակառավարման մյուս 5 քաղաքներին, ապա դրանցում կոալիցիայի թեկնածուներին երկրորդ տուրում կդիմակայեն ընդդիմադիր մյուս կուսակցությունների ներկայացուցիչները: Մասնավորապես, Մցխեթայում «Կանաչների», Գորիում՝ «Իրակլի Օքրուաշվիլի-վրացական կուսակցության», Օզուրգեթիում եւ Փոթիում՝ «Հայրենասերների ալյանսի» ներկայացուցիչները:

Ինչ վերաբերում է մունիցիպալիտետների վարչության նախագահների ընտրությանը, ապա, ինչպես վերեւում նշվեց, ընտրությունների արդյունքներով 46 մունիցիպալիտետներում հաղթեցին «Երազանքի» ներկայացուցիչները: Միայն Թբիլիսիի Սաբուրթալոյի ընտրատարածքում վարչության նախագահի պաշտոնի համար պայքարում 33,59 տոկոսով հաջողության հասավ անկախ թեկնածու Ալեկո Էլիսաշվիլին:

Ինչ վերաբերում է համամասնական ընտրակարգով տարբեր մակարդակների սակրեբուլոների անդամների ընտրություններին, ապա, Վրաստանի մասշտաբով՝ 50,84 տոկոսով, առջեւից է ընթանում «Վրացական երազանք» կոալիցիան: 22,4 տոկոսով երկրորդը «Միասնական ազգային շարժումն» է, իսկ «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը» ընտրողների 10,23 տոկոսի աջակցությամբ երրորդն է:

ԹԲԻԼԻՍԻ

Վերոնշյալ ընտրական սուբյեկտները իրենց ներկայացուցչությունները կունենան նաեւ Թբիլիսիի սակրեբուլոյում: Մայրաքաղաքի օրենսդիր մարմնի անդամության համար պայքարում «Վրացական երազանք» կոալիցիան արժանացավ 46,02 տոկոսի աջակցությանը, «Միասնական ազգային շարժումը»՝ 26,12 տոկոսի, «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը»՝ 10,35 տոկոսի: Թբիլիսիի սակրեբուլոյում ներկայացուցչություն կունենա նաեւ «Հայրենասերների ալյանսը», որն արժանացավ ընտրողների 6,34 տոկոսի աջակցությանը: Մեծամասնական ընտրակարգով, Իսանիի շրջանից «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմության» կողմից Թբիլիսիի սակրեբուլոյի անդամության թեկնածու առաջադրված Գարիկ Սիմոնյանը՝ ընտրողների 9 տոկոսի աջակցությամբ, չկարողացավ հաղթահարել արգելագիծը:

Ինչ վերաբերում է կոնկրետ շրջանների տվյալներին, ապա պատկերը հետեւյալն է.

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Հունիսի 15-ի տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքներով, Ախալքալաքիի մունիցիպալիտետի վարչության նախագահի պաշտոնի համար պայքարում՝ 60,55 տոկոսով, հաջողության է հասել Էդուարդ Աղասարյանը,

Տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրություններում եւս ընտրողների 51,06 տոկոսի աջակցությամբ, հաղթող դարձավ «Վրացական երազանք» կոալիցիան: 29,62 տոկոս իր ակտիվում գրանցեց «Ոչ խորհրդարանական» ընդդիմությունը: 7,8 տոկոս ձայնի արժանացան «Միասնական ազգային շարժումը», իսկ Բուրջանաձեի գլխավորած միավորումը հավաքեց ընտրողների 4,98 տոկոսի ձայնը:

ՆԻՆՈՇՄԻՆԴԱ

Մունիցիպալիտետի վարչության նախագահի մրցապայքարում՝ քվեների 80,57 տոկոսով, հաղթող դարձավ Նինոծմինդայում «Վրացական երազանքի» թեկնածու Գագիկ Կարսլյանը:

Իսկ ինչ վերաբերում է մունիցիպալիտետի սակրեբուլոյին, ապա այստեղ էլ անդամների ճնշող մեծամասնությունը կներկայացնեն «Վրացական երազանք» կոալիցիան: Այն արժանացավ ընտրողների 68,97 տոկոսի աջակցությանը, երկրորդը՝ 10,18 տոկոսով, «Միասնական ազգային շարժումն» է: Սակրեբուլոյում ներկայացուցչություն կունենա նաեւ «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը», որը ստացավ քվեների 6,8 տոկոսը:

ԱԽԱԼՑԻԽԵ

Ինչպես արդեն նշեցինք, ընտրություններին, որպես ինքնակառավարման քաղաքի՝ Ախալցիխեի առաջին քաքաքապետ է ընտրվել կոալիցիայի թեկնածու Գիորգի Կապանաձեն: Մունիցիպալիտետի վարչության նախագահի պաշտոնի համար պայքարում եւս հաղթեց կոալիցիայի ներկայացուցիչը: Այստեղ Զազա Մելիքիձեի օգտին քվեարկել էր ընտրողների 59,7 տոկոսը:

Ինչպես քաղաքի, այնպես էլ՝ մունիցիպալիտետի սակրեբուլոների անդամների ընտրարշավում համապատասխանաբար 57,27 եւ 59,22 տոկոսով, առջեւից է ընթանում «Վրացական երազանքը»: Կոալիցիայից բացի, ինչպես քաղաքի, այնպես էլ մունիցիպալիտետի սակրեբուլոներում ներկայացուցչություն կունենա «Միասնական ազգային շարժումը», որը համապատասխանաբար արժանացավ 29,26 եւ 31,58 տոկոսի աջակցությանը:

ԱՍՊԻՆԶԱ

Ասպինձայում՝ կոալիցիայի թեկնածու Լեւան Ցաբաձեն, ընտրողների 53,04 տոկոսի աջակցությամբ հաղթող դարձավ վարչության նախագահի պաշտոնի մրցապայքարում: Մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամների կեսից ավելին կհամալրեն «Վրացական երազանքի» ներկայացուցիչները, որոնք հավաքեցին քվեների 53,45 տոկոսը: Սակրեբուլոյում ներկայացուցչություններ կունենան նաեւ «Միասնական ազգային շարժումը» (24,89 տոկոս) եւ «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը» (6,93 տոկոս):

ԾԱԼԿԱ

«Վրացական երազանքի» ներկայացուցիչ Իլիա Սաբաձեն՝ 55,42 տոկոսով հաղթեց վարչության նախագահի մրցապայքարում: Ինչ վերաբերում է սակրեբուլոյին, ապա առաջին տեղը՝ 59,01 տոկոսով, «Վրացական երազանքն» է, 20,88 եւ 10,59 տոկոսով երկրորդ եւ երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցնում են Բուրջանաձեի գլխավորած ընտրական սուբյեկտն ու «Ազգային շարժումը»:

ՄԱՌՆԵՈՒԼԻ

Ընտրությունների շեմին մունիցիպալիտետում ծավալված իրադարձություններն առանձնակի սրություն հաղորդեցին քվեարկությանը: Վարչության նախագահի պաշտոնի մրցապայքարում՝ 52,44 տոկոսով, հաղթեց կոալիցիայի թեկնածու Մերաբ Թոփչիշվիլին (ի դեպ, նա ընտրություններից առաջ հանել էր իր թեկնածությունը): Ընտրողները մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամների ընտրությանը՝ 52,89 տոկոսով, գերադասությունը տվեցին «Վրացական երազանքին»: Բացի կառավարող կոալիցիայից, Մառնեուլիի սակրեբուլոյում ներկայացուցչություն կունենան նաեւ «Միասնական ազգային շարժումը» (28,41 տոկոս) եւ «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը» (10,38 տոկոս):

ԲՈԼՆԻՍԻ

Այստեղ վարչության նախագահի մրցապայքարում՝ 70,82 տոկոսով, հաղթող դարձավ կոալցիայի թեկնածու Գոգի Մեշվելիանին: Իսկ մունիցիպալիտետի սակրեբուլոյում կներկայացնեն երեք քաղաքական ուժեր: Մանդատների մեծամասնությունը բաժին է ընկել «Վրացական երազանքին», որը հավաքել է 63,37 տոկոսը: Ընտրություններում երկրորդ տեղը զբաղեցրեց «Նինո Բուրջանաձե-միասնական ընդդիմությունը»՝ հավաքելով քվեների 13,23 տոկոսը, երրորդը՝ 12,53 տոկոսով, «Միասնական ազգային շարժումն է»:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ºðºÊ²Ü°ð

ԿԱՐՈ՞Ղ Է ՈՒՆԵՆԱԼ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ



Երեխան ոչ միայն իրավունք ունի ունենալ սեփական կարծիք, այլ նաեւ իրավունք ունի իր շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինել հարցի քննությանը եւ արտահայտել սեփական կարծիքն ընտանիքում, դատական եւ այլ մարմիններում:

Տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որեւէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Ընտանեկան օրենսգրքով նախատեսված դեպքերում, տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության եւ հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԱՆՋԱՐԵՂԵՆ, ՄՐԳԵՐ, ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐ

Ինչպես հայտնի է, սրանք օրվանիզմին անհրաժեշտ վիտամինների հիմնական մատակարարներն են: Սակայն դրանց օգտագործումը կարող է ոչ միայն առողջությունը պահպանել, այլեւ երբեմն փոխարինել թանկարժեք դեղամիջոցներին:

Բանջարեղենը, մրգերն ու հատապտուղները գործնականում C վիտամինի միակ աղբյուրն են, քանի որ կենդանական ծագմամբ մթերքներում դրա քանակը չնչին է եւ արագ քայքայվում է: Ասկորբինաթթվով առավել հարուստ են մասուրը, սեւ հաղարջը, քաղցր տաքդեղը, մաղադանոսը, կաղամբը, սամիթը, նարինջը:

Բանջարեղենն ու մրգերը հանքային այնպիսի աղերի աղբյուր են, ինչպիսիք են՝ կալիումը, կալցիումը, մագնիումը, ֆոսֆորը եւ երկաթը: Կալիումի մեծ քանակ կա հատկապես ջրերի մեջ: Կալիումի աղերով հարուստ են կարտոֆիլը, նեխուրը, բրյուսելյան կաղամբը, սեւ հաղարջը, բանանը, արքայախնձորը, ծիրանը:

Բանջարեղենի ու մրգերի բաղադրության մեջ առկա երկաթն օրգանիզմում շատ ավելի լավ է ներծծվում, քան դեղամիջոցներում եղածը: Երկաթով հարուստ են մասուրը, դեղձը, թուզը, ծիրանը, խնձորը, սալորը, խուրման:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է ԾՆՎՈՒՄ

Վիրավորանքը զսպված կատաղությունն է: Դրա մեջ ամենավտանգավորն այն է, որ միշտ այն նույն տեղում է կուտակվում, եւ գալիս է մի պահ, երբ եռալով սկսում է իր քայքայիչ գործը՝ վերածվելով ուռուցքների, նաեւ չարորակ: Դա նշանակում է, որ, վիրավորանքը զսպելով, մենք վնաս ենք հասցնում մեր առողջությանը:

Մեզնից շատերը կարծում են, թե զայրույթն արտահայտելը բարեկիրթ չէ, որ վիրավորանքները պետք է «կուլ տալ»: Բայց այժմ, երբ գիտենք, թե այդպիսով ինչ ենք անում մեզ հետ, պետք է կարողանանք հրաժարվել այդ վնասակար սովորությունից: Մեզնից բացի ու մեր փոխարեն, ոչ ոք դա չի կարող անել: Աննշմար խեցին, ավազահատիկ կուլ տալով, իր շուրջը մի ամբողջ սադափափայլ շերտ է գոյացնում, որը, ի վերջո, մարգարիտ է դառնում: Բայց այս դեպքում մեր մտքի ժապավենին անդադար պտտվող վիրավորանքները, տեղ-տեղ կուտակվելով, ոչ թե գեղեցիկ մարգարիտ են գոյացնում, այլ ուռուցքներ: Չի կարելի անդադար վերհիշել ու պահպանել վիրավորանքները, դրանցից պետք է վեր կանգնել: Երբ մարդիկ խոր ապրումներ են ունենում (սովորաբար՝ մարդկային հարաբերությունների ոլորտում), այդ զգացմունքները հիմնականում տեղայնացվում են սեռական օրգաններում: Օրինակ՝ կանայք իրենց ցավը «քշում» են դեպի կանացիությունը մարմնավորող օրգաններ, որտեղ այն բնավորվում է՝ առաջացնելով կիստա կամ ուռուցք:



Քանի որ վիրավորանքը մեր ներսում շատ խորն է տեղավորվում, մենք պետք է մեծ ջանքեր թափենք դրանից ազատվելու համար: Երբեմն մարդիկ մի քանի անգամ վիրահատվում են՝ հեռացնելով կրկին ու կրկին առաջացող ուռուցքը, ու այդպես էլ չեն հասկանում, որ պետք է կանխել հիվանդության ծագման մեխանիզմը, որը նոր ուռուցքներ է գոյացնում: Նրանց համար ավելի հեշտ է վիրահատվելը, քան ներելը: Իհարկե, ճիշտը թե՛ մեկը եւ թե՛ մյուսն անելն է: Բժիշկներին հաջողվում է ուռուցքները հեռացնել, բայց միայն մենք կարող ենք կանխարգելել դրանց առաջացումը: Երբեմն մարդիկ ավելի շուտ պատրաստ են մեռնել, քան փոխել սեփական վարքագիծը: Ոմանք նույնիսկ ուտելիքի հարցում ոչ մի դեպքում չեն փոխում իրենց սովորությունները՝ նույնիսկ մահվան սպառնալիքի դեպքում: Յուրաքանչյուրն իր ընտրությունն ինքն է անում: Պետք է հասկանալ, որ յուրաքանչյուրի արարքը տեղավորվում է իր ուժերի, գիտելիքների ու պատկերացումների շրջանակում, հետեւաբար, դիմացինից վիրավորվելն անհեթեթություն է: Մենք բոլորս ապրում ենք երկրային այս կյանքում՝ որոշակի դասեր քաղելու եւ էվոլյուցիայի հոգեւոր սանդուղքով առաջ ընթանալու:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ



Ո՛չ կշտանալը, ո՛չ քաղցը եւ ո՛չ էլ ուրիշ որեւէ բան լավ չէ, եթե անցնում է բնական չափը:

ՀԻՊՈԿՐԱՏ
(մ.թ.ա. 460-մ.թ.ա. 356)
Հնադարյան հույն բժիշկ

Աշխատանքը իսկապես այն մյունհաուզենյան հյուսքն է, որից կառչելով, կորսվածը կարող է ինքը դուրս պրծնել ճահճուտից:

ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԽՏ
(1871-1919)
Գերմանական եւ միջազգային բանվորական շարժման գործիչ

Պետք է միայն ցանկանալ, այն ժամանակ կգա եւ ուժը:

ԳՈՒՍՏԱՎ ԼԱՆՍՈՆ
(1857-1934)
Ֆրանսիացի գրականագետ

Մարդն ինչ կատարում է, այն էլ նրան է պատկանում: Նրա հզորությունը հենց իր մեջ է:

ԷՄԵՐՍՈՆ
(1803-1882)
Ամերիկացի էսսեիստ

Կարեւորն աշխատանքն է: Տաղանդն, առանց աշխատանքի, հրավառությունից ավելին չէ. կփայլատակի մի ինչ-որ ակնթարթ, եւ ամեն ինչ կչքանա անհետ:

ՌՈԺԵ ՄԱՐՏԵՆ ԴՅՈՒ ԱՐ
(1881-1958)
Ֆրանսիացի գրող

Հաջողության հասած յուրաքանչյուր տղամարդու թիկունքին կանգնած են գոհ կինը եւ զարմացած զոքանչը:

ԱՐԱՅԻԿ ԱՎԱԳՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

Ավարտվեց 2014 թվականի մայիսի 26-ին մեկնարկած «Տեմպոյի» «Դարձիր հաջողակ» ակցիան:

Հունիսի 13-ին «Տեմպոյի» «Դարձիր հաջողակ» ակցիան, իրոք, ուրախացրեց Թելավի քաղաքի բնակիչ Սիմոն Իշխանովին:

Պարոն Սիմոնը ակտիվ ծխող է: Հունիսի 13-ին, նա, ինչպես միշտ, գնեց երեք տուփ «Տեմպո» եւ դարձավ BMW-ի առաջին խաղարկության հաղթողը: Այս նվերը նրա համար անակնկալ էր, եւ դժվարությամբ հավատաց, թեպետ կարճ ժամանակում համոզվեց, որ «Տեմպո» ծխելը նրան ընձեռում է բացառիկ նվերներ ստանալու հնարավորություն, եւ նրա ուրախությունը չափ ու սահման չուներ:

Պարոն Սիմոնին պատկանող առաջին խաղարկության BMW-ն կփոխանցվի հունիսի 23-ին Օմեգա Մոտորսում:

Օմեգա ընկերությունը շնորհավորում է պարոն Սիմոն Իշխանովին:

Իսկ մենք հիշեցնում ենք, որ ակցիայի օրերը երկուշաբթին եւ ուրբաթն են, ժամը 09:00-ից մինչեւ 21:00-ն: Որպեսզի ծխողը դառնա առաջին խաղարկության չորս BMW-ներից մեկի, կամ այլ հետաքրքիր նվերի տերը, անհրաժեշտ է Օմեգայի խանութում գնել երեք տուփ «Տեմպո» եւ դրա դիմաց ստանալ մեկ գաղտնագրով տոմսակ: Գաղտնագրի գոտում երեք միանման նվերի հայտնաբերման դեպքում, ծխողը դառնում է վերոնշյալ նվերի տերը եւ անմիջապես ստանում է հետաքրքիր նվերները, ինչպիսիք են՝ 10 լիտր վառելանյութի կտրոն, Օմեգա խմբի «Մորելի ժելատոն», պաղպաղակ պատրաստելու սարքի երկու հոգու վաուչեր, Տեմպոյի կրակայրիչ, «Պինո Գրիջիո» իտալական գինի եւ BMW-ի գեղեցիկ սարքավորումներ:

«Օմեգա» ընկերությունը մշտապես ձգտում է իր սպառողներին ուրախացնել խրախուսիչ ակցիաներով եւ ձեզ ապագայում շատ նորամուծություններ եւ նվերներ են սպասում: Այնպես որ, ուշադիր եղեք:

ԾԽԵԼԸ ՍՊԱՆՈՒՄ Է
ԾԽԵԼԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ՄԱՇԿԻ ՎԱՂԱԺԱՄ ԾԵՐԱՑՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հունիսի 18-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է հայկական երկաթուղու հավատարմագրային կառավարումն ստանձնած «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ նախագահ, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահ Վլադիմիր Յակունինին:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկել են հայկական երկաթուղու ներկայիս վիճակին, զարգացման հեռանկարներին, կոնցեսիոն պայմանագրով «Ռուսական երկաթուղիներ»-ի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքին վերաբերող հարցեր:

Հայկական երկաթուղու հավատարմագրային կառավարումն ստանձնած ընկերության նախագահը Սերժ Սարգսյանին ներկայացրել է հայկական երկաթուղու արդիականացման, տեխնիկական վերազինման ուղղությամբ իրականացված ներդրումները, ընթացիկ աշխատանքները, ընդհանուր առմամբ անդրադարձել է նաեւ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գործունեությանը, խնդիրներին եւ զարգացման ծրագրերին:

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԾՈՎ ՀԱՄԱԶԵԿՈՒՅՈՂՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունիսի 18-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) Հայաստանի հարցով համազեկուցողներ Աքսել Ֆիշերին եւ Ալան Միլին, ովքեր փաստահավաք առաքելությամբ հունիսի 16-18-ը գտնվում էին Հայաստանում:

Հյուրերի խնդրանքով, Հովիկ Աբրահամյանը ներկայացրել է ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթությունները, սիրիական ճգնաժամի պատճառով Հայաստան տեղափոխված սիրիահայերի համար Հայաստանի կառավարության կողմից իրականացվող օժանդակության ծրագրերը: Վարչապետն անդրադարձել է նաեւ սահմանադրական բարեփոխումներին, տարածաշրջանային իրավիճակին, հարեւան երկրների հետ հարաբերություններին եւ ինտեգրացիոն գործընթացներին ՀՀ մասնակցությանը: Զրուցակիցները վերահաստատել են արդյունավետ համագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը՝ մարդու իրավունքների, օրենքի գերակայության եւ ժողովրդավարության ոլորտում ավելի բարձր մակարդակի առաջընթաց արձանագրելու նպատակով:

Հանդիպման ընթացքում արծարծվել են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը վերաբերող հարցեր:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Բեռլինում հունիսի 17-ին կայացավ Հայաստանի եւ Գերմանիայի արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հանդիպումը:

Հայաստանի եւ Գերմանիայի արտգործնախարարները անդրադարձան միջազգային եւ տարածաշրջանային մի շարք խնդիրների՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցություններին, Ուկրաինայում տեղի ունեցող զարգացումներին, սիրիական ճգնաժամին, Իրաքում տիրող իրավիճակին: Էդվարդ Նալբանդյանը գերմանացի գործընկերոջը ներկայացրեց ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի եւ միջազգային հանրության կողմից ձեռնարկվող ջանքերը: Նախարարներն անդրադարձան Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններին: Էդվարդ Նալբանդյանը հրավիրեց Գերմանիայի արտգործնախարարին այցելել Հայաստան:

Նույն օրը Էդվարդ Նալբանդյանը հանդիպում ունեցավ վարչապետ Անգելա Մերկելի արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Քրիստոֆ Հոյսգենի հետ: Զրուցակիցները հանգամանալից քննարկեցին միջազգային եւ տարածաշրջանային մի շարք հարցեր:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը Երեւանի պետական համալսարանում մասնակցել է Հայկական տնտեսագիտական միության տարեկան եռօրյա գիտաժողովի բացմանը:

Ողջունելով ներկաներին՝ վարչապետը կարեւորել է գիտաժողովի անցկացումը ժամանակակից տնտեսության զարգացման հեռանկարների քննարկման եւ նոր ուղիների բացահայտման առումով: Եռօրյա գիտաժողովի շրջանակում, որին մասնակցում էին հայաստանցի, սփյուռքահայ եւ արտասահմանցի տնտեսագետներ, քննարկվեցին Հայաստանի տնտեսական զարգացմանը եւ մրցունակությանը, դրամավարկային քաղաքականությանը, միջազգային առեւտրին, ֆինանսատնտեսական հատվածին եւ մի շարք այլ թեմաներին վերաբերող հարցեր:

ԱՃ՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ



Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2014 թվականի հունվար-մայիսին 4 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը ներկայացրել է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: Այս տարի առաջին անգամ աճ է արձանագրվել բոլոր ոլորտներում: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում Հայաստանում շինարարության ոլորտում արձանագրված անկումից հետո, նախորդ չորս ամիսներին արձանագրված աճը պահպանվել է՝ կազմելով 0,5 տոկոս: 2013թ. հունվար-մայիսի համեմատ, այս տարի ծառայությունների ծավալն աճել է 3,1 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 5,4 տոկոսով: Առեւտրի շրջանառությունն աճել է 5,1 տոկոսով: Արդյունաբերական արտադրանքի ծավալը 0,2 տոկոսով աճել է 2013թ. հունվար-մայիսի ցուցանիշից: Էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է 0,2 տոկոսով (3 միլիարդ 251 մլն կվտ.ժ), միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6,7 տոկոսով: Արտաքին ապրանքաշրջանառության ծավալները, 2013թ. հունվար-մայիսի համեմատ, աճել են 2,3 տոկոսով (2 միլիարդ 278,9 մլն ԱՄՆ դոլար), ընդ որում՝ արտահանումն աճել է 3,2 տոկոսով (580 մլն դոլար), իսկ ներմուծումը՝ 2 տոկոսով (1 միլիարդ 698,9 մլն դոլար):

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ ՄՈՏԵՆՈՒՄ է 4 ՄԻԼԻԱՐԴԻ

Անցյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 3 մլրդ 899,1 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 37,1%-ը, 2012 թվականի 3 միլիարդ 739,1 մլն ԱՄՆ դոլարի եւ 37,7%-ի դիմաց:

Այս մասին Ազգային ժողովում ՀՀ 2013թ. պետական բյուջեի կատարողականի հաշվետվության ներկայացման ընթացքում տեղեկացրեց Հայաստանի ֆինանսների փոխնախարար, գլխավոր գանձապետ Ատոմ Ջանջուղազյանը: «Պարտքի հիմնական մասը՝ 3 միլիարդ 390,8 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության պարտավորություններն են, 508,3 մլն ԱՄՆ դոլարը՝ Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները»,- ասաց Ջանջուղազյանը: Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 861,3 մլն ԱՄՆ դոլար, որից 665,9 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության եւ 195,3 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 30,8%, նախորդ տարվա 9,4%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ՝ 32,9%, նախորդ տարվա 10,2%-ի դիմաց:

2013 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկման պետական բյուջեի եկամուտների ցուցանիշների անախադեպ աճը պայմանավորված է ռուսական 500 մլն ԱՄՆ դոլար վարկի վաղաժամկետ մարումով:

ԸՆԴՈՒՆՎԵՑ ԾՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՕՐԵՆՔ

Հայաստանի Ազգային ժողովը քվեարկությամբ ընդունեց «Շրջանառության հարկի մասին» եւ հարակից օրենքների նախագծերի օրենսդրական փաթեթը, որով առաջարկվում է նվազեցնել շրջանառության հարկը, ինչպես նաեւ հարկային արտոնություններ տրամադրել ընտանեկան բիզնեսին:

Օրենսդրական նախաձեռնությամբ, առաջարկվում է առեւտրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառության հարկի դրույքաչափը, 3,5 տոկոսի փոխարեն, սահմանել 1 տոկոս: Ընտանիքի անդամների կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության համար նախագծով նաեւ կներդրվի հարկման արտոնյալ համակարգ:

ՔԵՍԱԲԱՀԱՅԵՐԻ ՏԱՍՆՅԱԿ ԸՆՏԱՆԻՔԵՐ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ

Քեսաբահայերի տասնյակ ընտանիքներ վերադարձել են իրենց բնակարաններ: Այդ մասին հայտնել է Կաթողիկե եկեղեցու վարդապետ Նարեկ Լուսինյանը: Նրա խոսքերով, տեղում բավականին ծավալուն հիմնախնդիրներ են կատակվել, թեպետ բնակավայրի ազատագրումից հետո, դրանք աստիճանաբար կկարգավորվեն:

Նարեկ Լուսինյանը հայտնեց նաեւ, որ Քեսաբի ազատագրումից հետո, հայկական եկեղեցիները, հաստատությունները, մշակութային միությունները ավերվել, հրկիզվել կամ նյութական լուրջ կորուստներ են կրել: Նրա խոսքով, զինյալները սրբի գերեզման են քանդել եւ հանել աճյունը:

Քեսաբի ղեկավարությունը կոչ է արել քեսաբահայերին վերադառնալ իրենց բնակարաններ, զգուշանալ օտար կողոպտիչներից, ովքեր սկսել են ներխուժել Քեսաբի բնակարաններ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 17-ին Գյումրիի քաղաքապետ Սամվել Բալասանյանն ընդունել է ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքապետ Զարեհ Սինանյանին:

Հանդիպման ընթացքում Սամվել Բալասանյանը Գյումրին եւ Գլենդելը քույր քաղաքներ հռչակելու մասին փաթեթ է ներկայացրել իր գործընկերոջը ուսումնասիրության եւ առաջարկներ ներկայացնելու համար:

«ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունիսի 18-ին, Երեւանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում, մեկնարկեց Հայաստանում առաջին անգամ կազմակերպվող «Կովկասի առաջնություն» խորագրով երգի եւ պարի մրցույթ-փառատոնը:

«Կովկասի առաջնություն» մրցույթ-փառատոնին մասնակցում են ոչ միայն Կովկասի, այլեւ այլ երկրների մի քանի տասնյակ ներկայացուցիչներ: Միջոցառման մեկնարկին բեմ դուրս եկան 18 ազգերի 9-35 տարեկան ներկայացուցիչները՝ իրենց դրոշներով: Մասնակիցները հանդես եկան տարատեսակ պարային եւ երաժշտական համարներով:

ԿՐՉԱՏՎԵԼ ԵՆ ՍՏԱՄԲՈՒԼ-ԵՐԵՎԱՆ ՉՎԵՐԹԵՐԸ

Ստամբուլ-Երեւան ավիաչվերթի թուրքական կողմի կազմակերպիչ Տիգրան Ալթունը հայտնել է, թե այսուհետ Ստամբուլ-Երեւան ավիաչվերթն իրականացվելու է շաբաթվա ընթացքում մեկ անգամ, նախկին երկուսի փոխարեն:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի փոխանցմամբ՝ Ստամբուլ-Երեւան չվերթներն իրականացնող թուրքական կողմի ներկայացուցիչ Tower Havayollar ավիաընկերության սեփականատեր Տիգրան Ալթունը Ստամբուլ-Երեւան չվերթի կրճատումը կապել է Հայաստանում տնտեսական վիճակի վատթարացման հետ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

21.06.2014. Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից

301 թվականի այս օրը Սուրբ Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որն սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի:

22.06.2014. Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի

23.06.2014. Բեթղեհեմի մանուկների, Ակակիոս վկայի, Մովկիմա քահանայի եւ Կոտրիատիոս զինվորի հիշատակության օր

24.06.2014. Հիշատակ Սուրբ Նունե եւ Մանե կույսերի

Սուրբ Նունեն եւ Մանեն Հռիփսիմյանց կույսերի խմբից էին: Հայաստան հասած 37 կույսերից զատվելով՝ Մանեն հեռանում է Եկեղյաց գավառի Սեպուհ լեռը: Իսկ Նունե կույսը (վրաց. աղբյուրներում՝ Նինո) մեկնում է Վրաստան: Գործած հրաշքների եւ բարեգործություններ համար կույսին տանում են արքունիք, ուր բժշկում է հիվանդ թագաւոր: Վրաց Միհրան թագավորը եւս, անմիջապես իր վրա զգալով անծանոթ Աստծու զորությունը, դարձի է գալիս: Այսպիսով, սուրբ Նունեն դառնում է Վրաստանի առաքելուհին:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱ-ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2014/2015 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով՝ առկա եւ հեռակա կրթաձեւերով.

Մագիստրոսի որակավորմամբ՝
«Հաշվառում եւ աուդիտ»
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»
Ուսման տեւողությունը՝ 1 տարի - առկա կրթաձեւով:
Բակալավրի որակավորմամբ՝
«Ֆինանսներ եւ վարկ» ***(բանկային գործ)***
«Ֆինանսներ եւ վարկ» ***(մաքսային գործ)***
«Ֆինանսներ եւ վարկ» ***(ապահովագրական գործ)***
«Հաշվառում եւ աուդիտ»
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»
Ուսման տեւողությունը՝ 4 տարի - առկա եւ հեռակա կրթաձեւով:
Կրտսեր մասնագետ որակավորմամբ՝
«Հաշվապահական հաշվառում»
«Ֆինանսներ եւ վարկ»
Ուսման տեւողությունը՝ 3 տարի - առկա կրթաձեւով:
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»
Ուսման տեւողությունը՝ 4 տարի - առկա կրթաձեւով:

Ընդունելությունը տվյալ մասնագիտություններով կատարվում է հարցազրույցով՝ 9-րդ դասարանի ավարտական վկայականով:

Շրջանավարտները ուսումը կշարունակեն համալսարանի 2-րդ կուրսից, գերազանցիկ ուսանողները՝ 3-րդ կուրսից՝ համապատասխան մասնագիտությամբ:

Ինստիտուտի շրջանավարտներն ստանում են Ուկրաինայի Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի պետական դիպլոմ, որը ճանաչվում է աշխարհի 82 երկրում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ ՀՀ, ք. Երեւան, Ավան, Աճառյան 31, հեռ.՝
(+374 10) 61-22-02, 61-30-10, 093-85-25-68 (Երեւան), 5-74-21-31-81 (Թբիլիսի)
e-mail: erfiltanx@yahoo.com www.eftneu.am

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ



«Caucasus Healthcare - 2014» ՄԻՋԱԶԳԱՅԻՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Թբիլիսիի Expo Georgia ազգային ցուցահանդեսային կենտրոնում հունիսի 18-21-ը անցկացվեց բժշկական տեխնոլոգիաների, լաբորատոր սարքավորումների, ստոմատոլոգիայի, դեղագործության եւ օպտիկայի Caucasus Healthcare- 2014 14-րդ միջազգային ցուցահանդեսը եւ կոսմետիկայի Tbilisi Beauty and Aesthetic Medicine-2014 9-րդ միջազգային ցուցահանդեսը, տեղեկացնում է «Արմենպրես»-ը:

Ցուցահանդեսներում ներկայացվեցին հիվանդանոցների համար նախատեսված բժշկատեխնիկական սարքավորումներ, դեղագործական միջոցներ եւ օպտիկա, ինչպես նաեւ կոսմետիկական արտադրանք, օծանելիք, մազերի խնամքի եւ կոսմետիկական բժշկության միջոցներ, առողջարարական կենտրոնների համար նախատեսված սարքավորումներ, մաշկի ախտորոշում, արոմաթերապիա:

Ցուցահանդեսի կազմակերպիչն Expo Georgia-ն է: Դրա շրջանակներում անցկացվեցին սեմինարներ, շնորհանդեսներ եւ վարպետաց դասեր:

ՖՈՒՏԲՈԼ

ՖՈՒՏԲՈԼ. ԵՐԲ ԽԱՂԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ ՁՈՀԱԲԵՐՎՈՒՄ Է ԱՐԴՅՈՒՆՔԻՆ

Արդեն մեկ շաբաթ է, ինչ մարզասեր հանրության ուշադրությունը բեւեռված է Բրազիլիային, որի 12 քաղաքներում ութ խմբերի բաժանված աշխարհի ուժեղագույն 32 թիմերը վիճարկում են առաջնության 1/8-րդ եզրափակիչի 16 ուղեգրերը:

Խմբային առաջին հանդիպումները ինչպես զարմանք, այնպես էլ որոշակի հիասթափություն պատճառեցին: Ըստ երեւույթին, որոշ թիմեր, խաղի գեղեցկության փոխարեն, գերադասում են ցուցաբերել պրագմատիկ, արդյունքին նպատակամղված խաղ: Հավանաբար, դրանով է բացատրվում բրազիլացիների, իրենց ոճին անսովոր զգույշ խաղը, իտալացիների ու պորտուգալացիների անվստահությունն ու շտապողականությունը, էլ չենք խոսում իսպանացիների, արդեն ցավոք, աշխարհի նախկին չեմպիոնների, նախ անչափ ինքնավստահ, ապա խուճապային խաղի մասին:

Հոբելյանական առաջնության յուրահատկությունը կայանում է նրանով, որ նախորդների համեմատությամբ, այս առաջնությունում խաղի հաշիվը լրիվությամբ համապատասխանում է ցուցաբերած խաղի որակին: Այս տեսակետից, լրիվությամբ տրամաբանական են դառնում իսպանացիների (երկու խաղում բաց են թողել յոթ գոլ) եւ անգլիացիների պարտությունները (փաստորեն երկուսն էլ գործնականում զրկվել են առաջնության հաջորդ փուլի ուղեգիրը նվաճելու հնարավորությունից), պորտուգալացիների, բրազիլացիների, ուրուգվացիների, արգենտինացիների եւ նաեւ ռուսների անշուք խաղը: Առաջնության բացառությունների թվում են Նիդերլանդների, Ֆրանսիայի եւ, իհարկե, առաջին հերթին Գերմանիայի հավաքականները: Եվ բանն միայն նրանում չէ, որ հոլանդացիները ջախջախիչ պարտության մատնեցին աշխարհի չեմպիոններին, գերմանացիները ոչ պակաս տպավարիչ հաղթանակ տարան Պորտուգալիայի նկատմամբ, այլ, որ այս թիմերից յուրաքանչյուրը ցուցաբերեց տեխնիկապես հագեցված հարձակողական ֆուտբոլ:

Ինչեւիցե, եւս մեկ շաբաթ, եւ խմբային մրցաշարը կավարտվի: Իսկ մինչ այդ, 1/8-ի ուղեգրերն արդեն վաստակել են Հոլանդիայի, Չիլիի, Կոլումբիայի հավաքականները:

Առաջնությունը շարունակվում է: Հուսով ենք, առաջիկայում շատ ավելի գրավիչ ու հետաքրքիր խաղեր կլինեն, որտեղ խաղի գեղեցկությունը չի զոհաբերվի արդյունքին:

ԽԱՉԲԱՌ

■	1	■	2	■	3	■	4	5		6		7
8							■		■		■	
■		■		■		■	9					
10		11		12		13	■		■		■	
■	14							■	15		16	
■	■		■		■		■	17				
■	18		19		20		21	■		■		■
22						■	23			24		25
■		■		■		■		■	26			
27		28		29		30		31	■		■	
■	■	32					■	33			34	
■	■		■		■		■		■	35		
36	37		38	■	39		40			■		■
■		■	41						■	42		43
44				■	45			■	46			
■		■	47						■	48		
49				■	50			■	51			

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Ղազախստանի մայրաքաղաքը: 8.Չհամաձայնել, հերքել: 9.Գերմանացի մեծ ֆիզիկոս-տեսաբան ... Այնշտայն: 10.Բույսերի ու կենդանիների տեսակներ, որոնք տարածված են համեմատաբար ո՛չ մեծ տարածքում եւ ո՛չ մի այլ վայրում չեն հանդիպում: 14.Պայթուցիկ նյութ: 15.Վրաց դեռասան ... Ջահանի: 17.Պատահմունք, դեպք: 18.Որեւէ թեմային վերաբերող: 22.Ակվարիումային ձուկ: 23.Դելֆինների տեսակ: 26.Թերեւս, երեւի: 27.Աբխազիայում արտադրված: 32.Օլիմպիական, Աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոնուհի, մարմնամարզիկ ... Կաբաեւա: 33.Քաղաք ՀՀ Շիրակի մարզում: 35.Ուկրաինայի մայրաքաղաքը: 36.... ցնդել, չքվել: 39.Սատուրն մոլորակի արբանյակներից: 41.Հատուկ սահմանափակիչով սկյութական երկար դաշույն (կամ կարճ թուր): 42.Վեհ, փառահեղ: 44.Հարավային Կորեայի մայրաքաղաքը: 45.Փուչ, դատարկ: 46.Թուրքիայի դրամական միավորը: 47.Անուն չունեցող: 48.Երկրաչափական մարմին: 49.Մեղվինը՝ բուժիչ, օձինը՝ մահացու: 50.Առանց ճտքի, երեսը կիսով բաց կոշիկ, ոտնաման: 51.Կարմրագորշ շերտ երկաթի մակերեսին, որ առաջանում է նրա օքսիդանալուց:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Որեւէ գործ անելու ներքին բուռն ձգտում, ավյուն: 2.Ուկրաինայի ներքին գործերի նախարարի պաշտոնակատար ... Ավակով: 3.Ժողովրդական բժիշկ: 5.Զամբյուղ, կողով (գվռ.): 6.Փոքր եղբայր: 7.Միաստվածական կրոններում համարվում է նյութական աշխարհի արարիչը եւ տիեզերքի կառավարիչը: 11.Գերմանացի երաժիշտ ... Բոլեն: 12.Ֆրանսիացի տիկին: 13.Ե՛վ Թռչուն, ե՛ւ «Չինական ակտինիդիա» (միրգ): 15.Էպիզոդ, կադր: 16.Կյանքը ռիսկի ենթարկած, ... կախված: 18.Հողաբլուր: 19.Թաջ-...: 20.Հայ Արշակունի թագավոր: 21.Թեոդոսիան հնում: 24.Նկար լորենու տախտակի վրա: 25.Վերեւ (հակ.): 28.Հոգեկան տանջալից ապրում՝ հավատարմության, նվիրվածության նկատմամբ ունեցած կասկածից: 29.Խորհրդային ավտոմեքենա: 30.Հայաստանի Տաշիր քաղաքի նախկին անվանումը: 31.Անձնական կամ պաշտոնական բնույթ կրող գրավոր ուղերձ: 34.Հռոմեացի քաղաքագետ եւ փիլիսոփա: 37.Սեւ ծովի ափին գտնվող Ուկրաինական քաղաք: 37.Աղցան: 39.Հայ բանաստեղծ, Ֆրանսիայի ազգային հերոս ... Մանուշյան: 40.Հայ կնոջ անուն: 42.Իտալացի կինոռեժիսոր Վիտորիո դե ...: 43.Մարդու եւ ողնաշարավոր կենդանիների գլխի կմախքը:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 5.Առասան: 6.Մոնակո: 10.Քավորակին: 12.Սառույց: 13.Բեռլին: 14.Վեհաժողով: 19.Ջնակերտ: 20.Ռաֆիկ: 21.Դարիալի: 24.Բաղձանք: 25.Շարական: 26.Ծովացուլ: 27.Ջանգված: 32.Նիկոլայ: 33.Պուսան: 34.Արտամետ: 38.Շուտասելուկ: 40.Իսահակ: 41.Բայրոն: 42.Շշմեցուցիչ: 43.Բանանց: 44.Հայրիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Առվույտ: 2.Վարարել: 3.Հորիզոն: 4.Վկայել: 7.Գոյական: 8.Ճապոնիա: 9.Կարինե: 11.Ծիթելի: 15.Ակնախոռոչ: 16.Հրաձգարան: 17.Ժառանգորդ: 18.Շիրակավան: 22.Անդուլ: 23.Քասաղ: 28.Պիկասո: 29.Բուսակեր: 30.Գարեջուր: 31.Լեգեոն: 35.Շուկշինա: 36.Խուլիգան: 37.Սարյան: 39.Դարվին:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445